Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.12.2022թ. ժամը 12:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ե. Աղաջանյան – ՖՆ գնումների քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Վ. Մուրադյան – ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ

Ն. Մաթևոսյան - ՖՆ գնումների քաղաքականության վարչության ավագ մասնագետի պաշտոնակատար

Ն. Մուրադյան - ՖՆ գնումների քաղաքականության վարչության մասնագետ

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան - ՖՆ կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

Բացակայում էր՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Շահնազարյան – ՖՆ գնումների քաղաքականության վարչության պետ

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

1. Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

1) Մասնակիցը հայտը ներկայացրել է հայերեն լեզվով, սակայն ներգրավված մասնակիցներից Հարություն Գյուլանյանի, Հրանտ Ազատյանի, Սերգեյ Խեչոյանի և Տաթևիկ Ավագյանի ինքնակենսագրությունները ներկայացված են անգլերեն տարբերակով: Անհրաժեշտ է ինքնակենսագրությունները ներկայացնել հայերեն լեզվով:

2) Արմինե Մկրտչյանի և Տիգրան Շահնազարյանի ինքնակենսագրությունները բացակայում են:

3) Ներկայացված փաստաթղթերից տեսանելի չէ աշխատակիցների աշխատանքային փորձառության համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին:

4) Հայտով չեն ներկայացվել մասնագետների ինքնակենսագրության և դրանում ներկայացված տեղեկատվության համապատասխանության մասին առնվազն երկու գործատուի կողմից ներկայացված հաստատումների պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ՀԲՄԾՁԲ-22/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 12:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Ե. Աղաջանյան

_____ Վ. Մուրադյան

_____ Ն. Մաթևոսյան

_____ Ն. Մուրադյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան